

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**26 դեկտեմբերի 2002 թվականի N 2140-Ն**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԱԾ, ԲԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԴԵՌ ՉՍՏԱՑԱԾ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՄ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ  
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

<<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի երկրորդ մասի կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել ատենախոսությունը պաշտպանած, բայց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. այաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ ապահովել ասպիրանտուրայի ավարտական կուրսի զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների ատենախոսության պաշտպանության օրվա նշանակումը մինչև ասպիրանտուրան ավարտելը, իսկ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ատենախոսության հաստատումը՝ պաշտպանելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կ Ա Ր Գ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԱԾ, ԲԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-  
ԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԴԵՌ  
ՉՍՏԱՑԱԾ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏ-  
ՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԴԻՐ  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) պաշտպանած, բայց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չստացած կամ ասպիրանտուրան ավարտած ու համապատասխան ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կարգը:

3. Ատենախոսությունը պաշտպանած, բայց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատումը դեռ չստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում ատենախոսության պաշտպանության օրվանից 2 ամիս հետո:

3. Ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում հայտարարված զորակոչի ընթացքում: